


ՊԱՅՄԱՆՈՒ

ՊԱՅՄԱՆՈՒ
Տարեկան . . 12 Ժր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ժր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Ժրար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻ ԱՄՆՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Redaction du journal
"Iraouunk"
VARNA (Bulgarie)

Редакция
на ВѢСТНИКЪ
„Иравункъ“
ВАРНА

Գրութիւնք եւ
լեւ տրուիր

Ծրարութեան տարի
20 լանդիւ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԹԻԱՊԱՐՏԻ

Բ. ՀԱՏՈՐԸ

Արտասահմանի ընթերցասերներու կողմէ այնչափ անհամբերու-
թեամբ սպասուած այս Բ. հատորն կը պարունակէ երկստիւրու-
թեան Բ. եւ Գ. մասերը ոչ կը վերջանայ .
Ա. հատորը (Ա. մաս) կը բաղկանայ 162 երեսներէ. զին 1 ֆր.
Բ. « (Բ. եւ Գ. մաս) « 432 « « 2 «
10 օրինակի դրամ դրոշմը 11 օրինակ կը ստանայ.
Դիմել ի Բ Ա ի Ո ի Ն Վ ի խմբագրութեան եւ մեր ծանուցած
գործակալներուն .

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ Բ. ՂՈՔԸ

... Խմբագիր

Եղբայրասպանութեան գործիք եղող
ձեռքերէ զարնուած երկու անմահ
զոհերու, Շահէն-Միտի եւ Գարեգին
Չիթճեանի յիշատակին համար քաղաքիս
Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ՝ Հնչ. Մաս-
նաճիւղին նախաձեռնութեամբ՝ կա-
տարուած հոգեհանգստեան պաշտօնին
առթիւ հաւաքուած՝ ամէն դասակարգէ
եւ ամէն կարգիքի տէր՝ երկուսն Ազ-
գայնոց միաձայն հաւանութեամբ կազ-
մուած բողոքարկու Յանձնախումբս
կը խնդրէ Պատ. Խմբագրութենէն որ
բարեհաճի ներքակեալ յայտարարու-
թիւնը հրատարակել իր թերթին ամե-
նէն մօտակայ թիւին մէջ, ընդունելով
առ այս մեր խորին շնորհակալու-
թիւնները .

Հայկ. Ե. Եարտըմեան, Յա-
րութիւն Ս. Փազարձգեան, Աստ
տուր Ս. Գրգքեանեան, Թագ
ուր Գ. Հիւտիւեան, Սամուէլ Կ.
Զօրլուան, Յ. Փափագեան, Կր
թօն Ս. Իքայէիւն .

8/21 Յուլիս 1903

Ֆիւլիդի

ՅԱՅՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ

Ի յիշատակ Գարեգին Չիթճեանի
եւ Շահէն-Միտի կատարուած հոգե-
հանգստեան պաշտօնին առթիւ կազ-
մուած Յանձնախումբս, թարգման
հանդիսանալով ամէն դասակարգէ եւ
ամէն կարգիքի տէր՝ ներկայ եակսեա
րազմութեան զգացումներուն, եւ
Նկատելով որ մինչեւ ցարդ Յիդ.
կուսակցութիւնը չեն շատացած մի-

ջջայն մասնաճիւղ ընելով՝ փոխադար-
ձաբար՝ իրենց ունեցած ենթադրական
չամ իրական թերութիւնները, այլեւ
կարգ մը անտրակելի եւ անխոստովա-
նելի միջոցներով զերար հալածած
են ,

Նկատելով որ հալածութիւն այս
գրութիւնը կուսակցական մոլեռան-
դութիւն մը յառաջ բերած է ժողո-
վութեան այն խաւերուն մէջ որոնք
տակաւն անգիտակից են յիշափոխա-
կան ճշմարիտ գործունէութեան հար-
կադրած պարտականութեանց,

Նկատելով որ կուսակցական այս
մոլեռանդութիւնը պատճառ դարձած
է եւ պիտի դառնայ շատ մը թանկա-
զին ուժերու չեղբայցման, եւ ջնջած
է կուսակցութեան միջեւ համերաշխ
եւ աշխիւ գործակցութեան մը ոգին ,

Նկատելով որ հայրենիքի փրկու-
թեան խնդիրը սերտօրէն կապուած է
այս կերպով ըմբռնուած գործակցու-
թեան մը բարեբար արդիւնքներուն
հետ ,

Նկատելով որ Հին-Հնչակեան
կեդրոնը՝ մասնաւորաբար՝ օգուտ քա-
ղելով աննշան թուով իրեն հետեւող-
ներուն տգիտութենէն, իր գործիչ-
ներով եւ հանրածանօթ չբարեբաղան-
ներով ծայրայեղօրէն զրգուած է իր
անգիտակից զատակարգին մոլեռան-
դութիւնը, եւ հրահանգած է հոգեով
եւ մ. րմով Հայրենիքին նուիրուած
Շահէն-Միտի եւ Գարեգին Չիթճեանի
վրայ կատարուած զազրելի ու անար-
դարանալի սպանութիւնները ,

Նկատելով որ այս ոճաբարձու-
թիւններով հայրենիքը կը զրկուի ոչ
միայն Չիթճեանի եւ Շահէնի նման
անձնուրած զաւակներէ, այլ եւ սոյն
հրէշայն սպանութեանց կոյր գերակա-
տալները եղող ձեռքակալուած անձե-
րէն, որոնք պիտի կրնային թերեւս
թանկագին օժանդակներ ըլլալ հայ
ազատագրական գործին՝ ճշմարիտ ու
պարտաճանաչ վարիչներու ձեռքին
ներքեւ ,

Նկատելով որ Հին-Հնչակեան
կեդրոնին յղացած ու զազանաբար կի-
րարկած այս գրութեան ուղղակի հե-
տեւանքը պիտի ըլլայ, մասնաւորա-
բար, ոչ միայն գիտակից ու անգի-
տակից զոհերու շարք մը, այլ եւ,
ընդհանրապէս, հայ խղճին վայրագօրէն
բռնաբարուած եւ լլկուած, յեղափո-
խական գաղափարին վարկաբեկումը
ժողովրդին մէջ եւ յեղ. կազմակեր-
պութեանց անբարոյացումը — տեսա-
կէս մը՝ որուն հանդէպ ամէն հայրե-
նասէր հայու եւ մասնաւոր ամէն
ճշմարիտ յեղափոխականի նուիրական
պաշտականութիւնը պէտք է ըլլայ
ազդուօրէն եւ գործնականապէս զո-
ղորդել ,

Նկատելով, վերջապէս, որ Հին-Հնչ-
ակեան կեդրոնին որդեգրած եւ նա-
խապէս իշխուած այս հակամարդ-
կային եւ եղեռնական գրութիւնը կըր-
նայ հարկաւորապէս սանդղել ինքնա-
պաշտպանութեան մը պէտքը հակառակ
կուսակցութեան մէջ, եւ կամ վտան-
գաւոր հետեւանքներով լեցուն ազ-
դեցութիւն մը ունենալ ամէն անոնց
վրայ՝ որոնք զոհերուն նկատմամբ
խանդոտ պաշտամունքի մը զգացում-
ները կը սնուցանեն ,

Եւ եղբայրացիներով՝
Յանձնախումբս կ'սրտչէ ներկայ
յայտարարութեամբ խնդրել արտասահ-
մանս բոլոր հայրենէն, առանց կուսակ-
ցական ոճի խտրութեան, որ

Ա. — Իրենց պատկանած չբանակ-
ներուն մէջ ամէն ազդեցութիւն ի
գարծ գնեն՝ թէ՛ յեղ. վարիչ մարմին-
ներուն եւ թէ՛ անոնց հետեւողներուն
վրայ, որպէսզի յեղ. գործունէութեան
մէջ մանչ աղիւ, անվերապահ համե-
րաշխ գործակցութեան մը ուղղու-
թիւնը ,

Բ. — Խնդրել բովանդակ ազգէն որ
հայրենիքէ եւ յեղափոխական հան-
գամանքէ զրկուած եղբայրասպանու-
թեան ոճիներով մարտասանուած
խմբակ մը նկատէ Հին-Հնչակեան ար-
դի կեդրոնը, մինչեւ որ անիկայ կա-
րենայ ջախջախիչ ապացոյցներով ար-
դարացնել իր սեւ ոճիները, — եթէ
երբեք կրնան անոնք արդարանալ .

Հայկ. Ե. Եարտըմեան, Յարու-
թիւն Ս. Փազարձգեան, Աստուր
Ս. Գրգքեանեան, Թագուր Գ.
Հիւտիւեան, Սամուէլ Կ. Զօրլուան,
Յ. Փափագեան, Կրթն Ս. Իքայէի-
ւան .

6/19 Յուլիս 1903

Ֆիւլիդի

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆՑՈՒԴԱՐՁԲ

Ս Ե Ր Պ Ի Ա

Վերջին օրերս Պէլկրատէ հասած
լուրերը Սերպիոյ քաղաքական վի-
ճակը կը ներկայացնեն կրկին մի քիչ
յուզեալ Բէթր Ա. թագաւորը իրեն
պատուակալ թիկնապահ ընտրեց գն-
դապետ Մաշինը՝ որ Ալէքսանտր թա-
գաւորին եւ Տրակա թագուհիին դէմ
պատրաստուած եւ այնչափ սնդորէն
գործադրուած դաւին հոգին կը կազ-
մէր եւ որ ոճրին հետեւեալ օրը
հանրային շինութեանց նախ օրար
եղած էր : Մեր ընթերցողաց ծանօթ է
թէ այս այն զնդապետ Մաշինն է որ
Տրակային նախորդ ամուսնոյն եղ-
բայր ըլլալով, այնչափ աշխատած
էր իր հորին երկրորդ ամուսնու-
թիւնը, թագուհի ըլլալը արգիլելու.
որովհետեւ կըսուէր թէ այդ կիրն նա-
խորդ ամուսինը սպաննել տուած է Ա-
լէքսանտրի օրրոր գրաւելով, թագա-
հի ըլլալու նպատակաւ :

Նր թագաւորին կողմէ զնդապետ
Մաշինի ընծայուած այս բացառիկ
պատիւը կամ վարձատրութիւնը շատ
զէշ տպաւորութիւն ձգեց եւ կըսուի
թէ Օպրէնովիչի արքայական տան
հաւատարիմ միացող սպանները դաւադ-
րութիւն մը կը պատրաստեն Ալէք-
սանտրի դաւադրութեանը դէմ : Այս
շատ բնական հակադրուած մը կը
նկատուի եւ երկուստեան թերթիւն
ոմանք Բէթր թագաւորը խոհմու-
թեան կը հրահրեն, որպէսզի այս
չարժումը վերջապէս չը գառնայ իւր
անձին դէմ ալ : Օտար դրամատուները
կը զոյնչանան Սերպիոյ տաճարային
գիւղութիւններ ընծայիլ որոնց այն-
չափ պէտք ունի երկիրը մանաւանդ
այս միջոցիս . այս պատճառաւ ժողո-
վութեան զգոհութիւնը զգալի կըլլայ :

Ահա երեսփոխանական ընտրու-
թիւններու օրը կը մօտենայ, կու-
սակցութեան պայքարը շատ խիստ
պիտի ըլլայ կը կարծուի : Յաւանդի-
մականները չափաւոր արժատականնե-
րուն հետ կը միանան, սոցին ազա-
տականներն ալ, զի նախարարու-
թեան կողմնակիցները կարելի է հա-
մաձայնին ծայրայեղ արժատականնե-
րու հետ, բաժնուելով հին-ազատա-
կաններէ որոնք շատ կողմնակից են
Օպրէնովիչներու :

Գալով թագաւորին, ի մօտոյ մեծ
ճամբորդութիւն մը պիտի ընէ երկ-
րին ամեն կողմերը, խի ընտրու-
թիւններէն յետոյ՝ որք հոկտեմբերին
տեղի պիտի ունենան, պիտի երթաւ

օտար վեհապետներու այցելութիւն տալու. բայց խնդիր է թէ ի՞նչ կերպ ընդունելութեանց պիտի արժանանայ Եւրոպայի մէջ. կը կարծուի թէ Ս. Բեդրսպուրկի մէջ լաւ ընդունելութիւն մը պիտի վայելէ, քանի որ իր անուանէր զգալունքները արտայայտեց արդէն. սակայն ուրիշ կողմեր նայնը չըլլայ թերեւս, նկատելով զորոքեալ ոճերն մէջ իր բարոյական պատասխանատուութենէն տակաւին սրբուած չըլլալը:

ՈՃՐԱԳՈՐԾ ՄԷ ՓԱՐԱԾ

Ամերիկայի Դաշնակցականներու օրկան Հայրենիքի թերթը կ'իմանայ թէ ողբացեալ Ի. Ժամարեան հայ բարեւորաբն սպաննողը ընկերներու միջոցաւ Մոսկուայի բանտէն վախճուած է. իսկ Շուշիի երկու բանտարկեալները ազատելու յոյս կայ: Լրատուն այս լուրը տալով միատեղ կ'աւելցնէ, «Ժողովուրդը խոնարհում է այդ մարդկանց խորհրդաւոր կազմակերպութեան առաջ, եւ կառավարութիւնից բարձր դատում նրանց» (?):

Մենք չենք զարմանար այս լուրին վրայ, գիտնալով թէ Ռուսաստանի մէջ, մանաւանդ օստիկանական գործերու համար, կաշառքը մեծ դեր կը խաղայ: Մարդիկը հայերէ բռնի առանձնու կէսը ուսու պաշտօնեային կամ օստիկանին տալով կրնան իրենց օձիքը ազատել:

Մենք չենք զարմանար նաեւ թէ Հայրենիքի խմբագրութիւնը ինչու համար այս լուրը թերթին ճակատը դրած է «Ժամհարեանի ճեղքումը փախցուած» խորագրով մը. զի գիտենք թէ այդ կ'ընէ իր պատկանած խմբակին իբր պարծանք, որ ուղղակի խոստովանութիւն մըն է թէ Ժամհարեանը իրենք զարնել տուած են: Եթէ ոչ ոճագործի մը փախուստը այդչափ զովասանական ֆրակով մը ինչ շարկ կար թիրթիռ ճակատը դնելու, միթէ նորութիւն էր ուսուական բանտերէ եւ օստիկաններու ձեռքէն յանձնուի:

յաւորներու ճողոպուտը: Իսկ այն յատկանշական խօսքը՝ թէ «Ժողովուրդը խոնարհում է այդ մարդկանց խորհրդաւոր կազմակերպութեան առաջ», եւ կառավարութիւնից բարձր է դատում նրանց: Իրենց համար ոչկաւ մը եւ ժողովուրդին սպառնալիք մը կը պարունակէ իր մէջ:

ՊԱՏՐՔ ՓՈԽԱՆՈՐԿԸ

Զորեքշաբթի օր քաղաքս հասաւ Պուլկարիոյ Պատր. Փոխանորդ Տ. Վահան Մ. Վ. Յուսէփեան: Վառնայի հասարակութիւնը վաղը առիթ պիտի ունենայ օնանշաններու անոր քարոզչին:

Մեր ունեցած առաջին տեսակցութիւնը լուրջ եւ փորձառու եկեղեցականին մը տպաւորութիւնը ձգեց անք վրայ: Իր բացատրութեանց նախելով, ինք չուզեր ուսումնական տեղական այլեւայլ խնդիրներով զբաղիլ, որոնք կրնար երկպառակութեան պատճառ դառնալ, այլ կը ջանայ որչափ կարելի չուս Առաջնորդ մը ընտրելու զրոյն յաջողցնել. ուստի նախ պատգամաւորի ընտրութեան կանխապատրաստութիւնները անսենսալ է: Իւրաքանչիւր քաղաքէ Առաջնորդարանին համար տրուելիք դոմար օրինակ տալու հետեւեալ է:

Մենք քննադատելի չենք գտներ առ այժմ անոր այդ վերապահութիւնը տեղական խնդիրներու մասին, քանի որ կարեւորագոյն գործին—Առաջնորդութեան հաստատման— յաջողութիւնը ապահովելու համար է որ նուազ կարեւոր տեղական խնդիրներ յետագայ ընել կուզէ: Աւարտի մենք ալ առ այժմ չպիտի ծանրանանք անհեղափայտ խորհրդոյ ապօրինութեանց վրայ, եւ ծանօթ գործին օժիքէն բռնելով զատաստանի կոչելու մեր արդար եւ անդադրաբար իրաւունքի գործադրութիւնը պիտի յետաձգենք առաջնորդական ընտրութեան վերջի, երբ այլեւս ձեռնառն մասինքնը կազմուած կ'ըլլայ եւ ինքզինքին անպատասխանատու կաշծող թաղական, նոգաբարձու եւ վարժապետ կը գտնուին համարառու բարձրագոյն մարմնով մը ներկայութեանը:

ՍԱՊԱՆՉ-ԳԻՒԼԵԱԼԻ ԶԱՐՆՈՒԼԸ

Ողբացեալ Շահէն—Միայն, 21-թեանի եւ դեռ մէկ քանի ծանօթ գործիչներու սպանութիւնը վճռող եւ հրահանգող չորս գլխաւոր դատարարներն մին Սապանչ-Գիւլեանը՝ որ վերջին անգամ Ամէ հայի մէջ ալ ուրիշ 10 հայեր սպանուած վճիռ արձակած էր, զորոքեալ Սամուէլ Իսլէզեան անունով հայէ մը յուշիս 7ին, երեքշաբթի օրը, Կիւլեանի ատրճանակի չորս հարուածներ արձակած է, որոնց միայն վերջինը միտուած է Սապանչ-Գիւլեանի թիկնոսկրին եզրը, զոյնայորին Կոտ. Սապանչ-Գիւլեանի հրահանգող փոխադրուած է. իր վիճակը յուսալից չէ եղեր, Կիւլեանի ձեռքակալներ եւ օստիկանութեան հարցումներուն պատասխաններ է. «Ես կ'ըզի սպաննել ան եւ ըրի»:

Հայրենիք կըսէ թէ Սամուէլ Կիւլեան նոր—Հնչակեան է: Շատ բնական էր որ եղբայրասպանները վրէժի գրութեան հանդիպէին: Մենք մեր յոյսը ուժով արդէն պարտաւեցիք այդ սխալմը մեր մէջ ստեղծողները:

ՊՈԽՐԷԼԻ ԲԵՐԵՐԱՐԱՆՈՐ

Քաղաքս հայ. ընթերցարանի վարչութեան տասն եւ ութամսեայ հաշուետեայ քննիչը պաշտօն ստանձնող Յանձնախումբին, որոյ պատ. անգամք են Տեառք Գրիգոր Պատուելիեան, Բիլզաւի Ս. Բիւզանդիան, Գրիգոր Նազակեան, Յարութիւն Պատմաճեան, Գրիգոր Մաքսեան եւ Միլիտի Զիլիկիւրեան, 1903 Յունիս 23 կատարած ըլլալով իր պաշտօնը կը վաւերացնէ ու կը հաստատէ նորա ուղղութիւնը:

Աստի վարչութիւնն նոյն հաշուեկշիռն եւ նուրբատուոյ մասնաւոր ցանկը ձեռք յղելով, պատիւ ունի

խնդրել որ հաճիք ձեր մօտաւայ թերթերէն միոյն մէջ հրատարակել զայնս: Ընդունեցէք Տէր, Ժողովոյս յարգանաց անկեղծ հաւատովն:

Ի. Գիւլեան վարչական Անդամաց Աստիկան Ստեփան (Կնիք)

Պոքրէշ, 28 Յունիս 1903

ՀԱՆՈՒԵԿԵԼԻ ՏԱՍԵ ԵՒՈՒԹԱՄԵԱՅ ՀԱՅԿԱՅԻՆ ԸՆԹԵՐՆԱՐԱՆԻ ՊՈԽՐԷԼԸ 1902 Յունուար ցվերջ Յունիսի 1903

Մ Ո Ւ Տ Ք

Պատրաստ գրած առժամանակեայ վարչութիւնէն	Տր. Պատ.
Յանձնալ վարչութիւնէն	57. —
Բաժնեկէմարներէ	353. —
ԱՐԱՒԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆ	
Նոնագր. վաճառումներէն	2. —
Քարթ. փոսթերէ	7. —
Անուշեղէններէ	76.40
Գրեանց ըլլալովներէ	
Կոյացած նուէրներէ	3. —
Թատերական ներկայացումներէ	730. —
Գանձակի հասոյթէն	5.60
Նուիրատուութիւններէ	468.20
Փոխառութիւնէ	105.72
Ընդհանուր գումար	1807.92

Ե Լ Ք

Ընթերցարանի վարձք, 1901 հոկ. 26է ցվերջ Յունիսի 1903	Տր. Պատ.
Քրտիթի ընկերութեան	
Քրտիթի համար	1. —
Ընթերցարանի վարձքի յապալման համար տուականք	15. —
Ընթերցարանի սպասարարին թոշակ	418.40
Ընթերցարանի գանձաւար պատուի	189.52
Քարթ փոսթերու	7. —
Նամակատուի մը	3. —
Գրատախտակի մը	8. —
Հին վարչութիւնէն մնացած պարտքի մը	7. —
Լրագրաց եւ հանդէսներու բաժնեկիւն	56.70

ԾԵՐՈՒՆԻ ԵՈՅՈՒ ԿԸ ԱՅՅԻ...

Բայց օր մը ըսին իրեն որ երկաթուղիին չիտուութիւնը կիրճին մէջէն սկսաւ: Դիւղացիներ կը վարձուէին բանելու եւ իւրքերի եղերքը կիջնէին:

Շրջաւ ծերունին: Կերեւել թէ տեղէ մը աւելի դիտուն ճարտարապետներ զանուցանաւ—ախարհ մեծ... Ծրանսացի՞ են նորէն:

Ըսին իրեն որ պուլկար են: Ապրած մնաց ծերունին: Ի՞նչ, մենք, պուլկար ճարտարապետներ: Ուր է բաշտներ եւ գիտուն ֆորմանայիններ կըսէին թէ չկրնար: Միթէ մենք աւելի՞ դիտուն մարդիկ ունինք եղեր... հապա միւլիօնները, հազարաւոր միլիօնները, ինչպէս կըսէր չորպաճի Մանո...

— Միլիօններն ալ ունինք... Մորուք ունեցողը սանտրն ալ կուենայ...

Յափառակութեամբ լեցուցեալ ծերունի Եոյոյի հողին: Բանակ, բաշա, թնդանօթ, իշխան, գիտնական մարդիկ, միլիօններ, հրաշալիք հրաշալեաց: Հիմա «Պուլկարական» իրեն կը ներկայանար մեծ, հզօր, հսկայ: Իր միտքը չէր կրնար ըմբռնել այս ամբողջ մեծութիւնը: Մինչեւ հիմա իրեն համար «Պուլկարական» նշաններն էին միայն գուառապետին ուսնոցներն եւ զինուորին սուրը, զորոնք չօչալած եւ համարուած էր. հիմա կը յափշտակէր զինք, կը հրացունէր իր զօրութեամբը եւ հպարտութեամբ կը լցունէր հողին: Պուլկար ձեռք

քը կը կտրէր լեռները, պուլկար աշտը կը հարկէր աշխարհ զարմացնող բաներ:

Ուր է հիմա Մանո չօչալածին, նայինք ի՞նչ պիտի ըսէ:

Երբոր լսեց ժայռերուն առաջին պայթիւնները, որոնք դէպի վար կը դաճալէին, թիւովը սրբեց աչքերը, որոնք արտասուքով լեցուած էին:

Անկէ իվեր իր կենալու սիրելի տղան էր իւրքերի խոր կիրճին վրայ կախուած ժայռը, որ կը հնչէր տնկուած աշխատութեան արձագանքը:

Առտուէն մինչեւ իրիկուն ժայռին վրայ կը կենար, մայիկ կընէր աղմուկը, պայթիւնները, ըրիչներու դիմանի վրայ հարուածները, կտրուած գլուխով, շարժումը, հսկայական զործին աշխատութեանց խառն շշուկը:

Երկաթուղին աւարտեցաւ եւ սկսաւ բանիլ: Միւրեւնի Եոյոյ զօղողալով լսեց շողեկաւորն տուլիւնն առաջին ձայնը, անիւներուն ճարձատիւնը երկաթէ ձողերուն վրայէն:

Կը սուլէր եւ կը չէր «պուլկար երկաթուղին»: Եւ կարծես ոգիւրդուեցաւ, վերակենդանացաւ: Կանոնաւորաբար կըրթար ժայռը, երբոր շողեկաւոր ժամը մօտենար, լուրու համար սուլիլը եւ նայնու պուլկար երկաթուղեոյն կիրճէն անցնիլը: Երկաթուղին իր մտքին մէջ ազատ Պուլկարիոյ զաղապարին հետ կապուեցաւ: Եւ կը խօսէր իրեն իր թնդանօթով, յոտակ, նոր, «Պուլկարական» մասնակցին վրայ: Ինչպէս առաջ գիւղին մէջ բան մը չէր յիշեցնէր իրեն ազատութիւնը. միայն սուլիլը

կը հաղորդէր: Եւ երբ կը մօտենար, ամեն բան կը ձգէր եւ գաւազանը ձեռքը կը վազէր ժայռը, տեսնելու...

Ուղեւորները՝ որոնք վաղմունքներն պատուհաններուն առջեւ կանգնած, այդ նկարագրի վայրերը կը դիտէին, զօրմանքով կը նշմարէին պիտանի լեռ մարդ մը որ գլխաւոր կը շարժէ իրենց: Ծերունի Եոյոյն էր այն, որ այս կերպով կողմունէր նոր Պուլկարին:

Դիւղացիները վարժուած էին ալ ամեն օր զինք ժայռին վրայ տեսնելու եւ ժայռով իրարու կըսէին:

— Ծերունի Եոյոյն կը նայի... Կենալի եւ աշխարհի համար այս մեծած մարդը յարութիւն կտանէր միայն զոգկառքին շառաչիւնէն եւ մանկական ուրախութեամբ կը խախտար. ան միայն կ'անձնաւորէր իրեն առջեւ ազատ Պուլկարին, որովհետեւ կենալին մէջ երկաթուղի չէր տեսած, իր երեւակայութիւնը կը նկատէր. զայն որպէս թեւաւոր հսկայ օձ մը, որ բերնէն բոց կարձակէ, կը սուլէ եւ կը մտնէ, աներեւակալելի ուժով եւ արագութեամբ կը տուրայ լեռներու մէջէն, տարածելով ազատ Պուլկարիոյ ոյժը, փառքն եւ յաւաքիւնութիւնը:

Կուրուցիւնն եւ պարզամտութիւնը զրահէ պէս պահած էր հողին աստղ մուկ կողմերուն յուսախաբութիւններէն, յուսախաբութիւններ՝ որոնք կը կրննք մենք, աչք ունեցողներս...

Եւ անիւլ կոյր:

Յաճախ նոր քօնով վրէժով մը զարմանալով որ միշտ նոյն ժամուն ժայռին վրայ կը տեսնայ ձեռունի մը որ գլխաւոր դէպի սուրբացող շողեկաւոր

Նոր գրեանց համար 46. —
Գրադատի ամբողջ գրեանց 56. —
Կազմելու համար
(*) Թատրոնի վարձք, գե-
րասանաց, նուագաձուլաց,
սոսնիկու և երթեւեկի 367. —
Ընդհանուր գումար 1807.92
(Կնիք)

(*) Թատրոնական ներկայացման
համար մասնաւոր հաշուեկշիռ մը ներ-
կայացուած չըլլալուն հասարակու-
թեան, ներկայ հաշուեկշիռն կցուած
է :

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՌՊ ՎԱՐԴՈ

Ազգ. յիշատիւթեան նուիրուած
երկու անձնազօր վերամազմեալ ընկեր-
ներու Միոյի և Զիթեանի եղբորակա-
ն մահովը խորխորուած մեր սրտին ու
մաքինմէջ քննականապէս չէր կարող
տեղ բռնել թէ, նոյնիսկ Հոգեհան-
դատի ժաման, ինքզինք հայ յեղա-
փոխական անուանող մէկը պիտի
գտնուէր, որ այդ սուգի վայրկեանը
պատեն անթիւ համարի իրեն ժող-
ովական անուն մը չընելու մտքով
խորականութիւններու դիմելու եր-
կու թանկագին զոհերու մահը չհա-
զործել փորձելով : Այս փառամուր-
թեան ամենապիղծն էր, զոր մենք
չէինք կարող երեւակայել :

Բայց ցաւալի է, շատ ցաւալի որ
ինչպէս յիշատիւթեան անուանող
եղբորակները գտնուեցան, նոյն-
պէս այն անմիջեւ թանկագին զոհե-
րու դեռ տաք արիւնովը ներկուած ի-
րենց ճակատին դափնի հիւսելու հե-
տախտիկներ ալ կը գտնուէին եղբր :

Պ. Վարդա զձեզ այս արգահատիկի
գրութեան մէջ տեսաւ, երբ կարգացի
Շարժումիդ մէջ «Ժողովուրդի բողոքը»
նախադրուածը հին առոնց քաշուե-
լու կը հրատարակէ թէ՛ ժողովուրդը
և Հնչ. Մանգոնիւրը խնդրած են որ
Վարդուն ալ ստենս բանէ, Դուռ. էր
ստեղծին անգամ քու մէկ քանի հե-
տեւորդներու գերանովը տարածա-
նողը թէ ատենաբանի կուղէք եղբր :
Մասնաճիւղը բնականապէս չէր կարող
մերթիւն ունէլ ցաւակցական արտայայ-
տութիւն այդ որու կողմէ ալ որգար-
միայն սրտնց որ զոհերու անկեղծ
հայրենասիրութիւնը կասկածի տակ
դնելու նպատակաւ եթէ խօսի կու-
զէք ընկեր մը անհրաժեշտ փաստերով

կը շարժէ, մտաւայ կայարանը կը
հարցունէր չղկեկառք մանող գիւղա-
ցիներուն :

— Ո՞վ է այդ մարդը, որ ամեն ա-
տեն ժայռին վրայէն գլխարկը կը շար-
ժէ, ինչուդ մը :

Եւ գիւղացիները սովորաբար կը պա-
տասխանէին :

— Չէ՛, ծերունի Եղոն է որ եր
նայի...

Երեկոյ մը Եղոն տուն չգալու :
Առտուն աղան ուղղակի ժայռը գնաց
դայն փնտռելու մտաձեւով որ գուցէ
անդունդը ինկած է :

Բայց հոն գտաւ զինք մեռած, զը-
խարկը ձեռքը :

Եղոն հոգին փչած էր ողջունելով
նոր Պուլիսիւրին...

Ի. Վազով
(Թարգմ. Գ. Թիւրքիզման)

Վ. Ե. Ր. Զ.

ձեզ համոզէ թէ ունէ կասկած անտե-
ղի է : Ահա այս մտքով էր որ ձեզ
գրեցի և համոզուեցայ թէ զսերուն
անկեղծութեան մասին այլեւս կաս-
կած չէ մնացած ձեր մէջ : Եւ սգաժո-
ղովին ժամանակ հարցուցի թէ ատե-
նախօսելու ձեր փափաքը չը պիտի
գործադրէք : Դուք ըսիք «Ճանկիւ-
նորի եւ Գ. Բալթիկեանի հետ խօսիլ
չեմ ուզեր, իսկ եթէ ժողովուրդը
պահանջէ կը խօսիմ» : Եւ անմիջապէս
հասկցայ ձեր միտքը, եւ պատասխա-
նեցի «Կուգեա որ ժողովուրդի մէջ
մէկը զրկեմ պոստիւս համար թէ Վար-
դուն թող խօսի» : Լա. կ'ըլլայ ըսիք :
Եւ ձեր այս որոշումով Ս. Ն. զրկեցի
որ բաժնետէսի պոստաց թէ Վարդուն
այ խօսի. եւ դուք կանխապատրաս-
տած այդ մէկ երիտասարդին պո-
ստը բաւական համարեցիք ելլել խօ-
սելու : ձեր երեւումը ծափոզն ալ նոյն
Ս. Ն. էր իր մէկ երկու. ընկերներով,
այսինքն ձեր բաղձնաքին եւ որոշու-
մին համաձայն գրկուած Ս. Ն. Այս բոլ-
րի միայն իմ կողմանէ ձեզ հասկցնելու
համար թէ բացի ձեր մէկ քանի հե-
տեւորդներէն ժողովուրդը ձեզ կա-
րեւորութիւն չտար, ինչպէս որ պա-
ցուցուեցաւ : Հոս հարկ եղաւ նաեւ
յիշել թէ չէ՞գործ ժողովուրդէն չտար
ուղղակի մեզ դիտողութիւն ըրին թէ
ինչ գործ ունէր հոն Վարդուն, որ
դեռ մէկ քանի որ առաջ Զիթեանի
դէմ հայրանքներ կը տեղացնէր իր
թերթով եւ դատադիրները կը քաշա-
լերէր :

Արդ ճիշդ եղիւթիւնը այս ըլլա-
յով հանդերձ, ամօթ չէ՞ր ձեր թեր-
թի մէջ ելլել գրել թէ Վարդո Հնչակ-
մասնաճիւղին հրաւերը մերժեց, բայց
ժողովուրդին բաժնետէսի պահանջին
վրայեղաւ խօսեցաւ, ծափարուեցաւ
եւայլն :

Փառով ձեր անցեալ չարթուան
«Նամակատութիւն»ին մէջ Վեր. Հնչակ-
կուսակցութեան հասցին ուղղած ա-
նարգակաւ խօսքերուն : Հետեւ
չի թաքնու, ուրիշ փաստեր չը փն-
տենք :
Այդ կուսակցութեան գրօնի պ. հպան-
ման համար եւ այդ կուսակցութեան
սեղանին վրայ իրենց անձելը գոհող
Միոյի և Զիթեանի հայրենասիրու-
թիւնը կը խոստովանիք ու մեզ հետ
կը սրտցնէք զանոնք : ալ ինչպէս
կրնաք անսուրբ կամ պիղծ կոչել այն
սեղանը որուն համար սուրբեր զոհ-
ուած են ու կը զոհուին : Երբ կըն-
դունիք թէ Միո եւ Զիթեան անկեղծ
յիշատիւթեաններ եւ հայրենասիրի
էին, արամբանօրէն պէտք է ըն-
դունիք նաեւ թէ անոնց իրենց ան-
ձերը նուիրած Հնչակեան սեղանը
աւելի սուրբ, աւելի հայրենասիրական
եւ աւելի յիշատիւթեան է :

Յիշատ կրնէր «յիշատներ ու կոյ-
րեր» ո՞ր մեծ է զոհն, թէ սեղանը
որ կը սրբացնէ զոհը : Արդ, Միո
եւ Զիթեան հայրենասէրները երբ
Հնչակ. սեղանին համար անձերին կը
նուիրեն ու կը զոհուին, ապուշ ըլ-
լալու է մարդ զիս ըսելու համար թէ
այդ սեղանը բուն հայրենասիրական
ստիւղ սեղանը չէ, այդ հայհոյել է
նոյն զոհերու յիշատակին :

Զիթեան կոյր հետեւող մը չէր,
այլ համոզուած ու համաձայն մարա-
գործութիւն եւ բարեկրթ մի անկուն
քարոզիչ մը : Երանի՛ թէ Դաշնակ-
ցութիւնն ալ իր մէջ քանի մը Զիթ-
եաններ ունենար, որպէսզի մաք-
րագործուէր այդ ալ իր աղաւթներէն,
եւ Վարդունը այն ատեն հոն տեղ չը
պիտի ունենային :

Փ. Հայաձեւեմ

ԱԶԳԱՅԻՆ

ՏՓՂԻՍԷ յուլիս 12 թուականով
Բրո-Արմենիայի հեռագրած են

«Քիւրտերու թշնամական ըն-
թացքին պատճառաւ Սասունի եւ
Մշոյ գաղտնի մէջ խիստ մեծ սարսափ
կը տիրէ : Ժողովուրդը եւրոպական
պիտուութեանց մարդասիրութեան կոչ
կընէ : »

ՆՈՐ. ԴԱՐԻ յուլիս 26 թիւին մէջ
կը կարդանք :

«Մեր ստացած տեղեկութիւննե-
րից երեւում է, որ Մուշը եւ Սա-
սունը մի ամսից աւելի պաշարուած է
թուրք զօրքերով, Եւրոպայից այն կող-
մերը մասն մի քանի հայ երիտա-
սարդների պատճառով : Կառավարու-
թիւնը հրամայել է փակել Սասունի
խոնելի ճանապարհները սովամահ ա-
նելու համար ալ լեռները քաշուած
երիտասարդներին : Երկրագործը վա-
խից չի կարողանում դաշտ դուրս գալ : »

ՏԻՎՐԻՆԷ մայիս 4 թուականաւ
նամակէ մը կը քաղենք հետեւեալ
տիպեր տեղեկութիւնները :

Տիվրիկի ժողովուրդը ծանր եւ ա-
նապահով կացութեան մը մէջ կը գտ-
նուի. կառավարութիւնը ամեն մի-
ջոց ի գործ կը դնէ հայ տարրը ոչն-
չացնելու համար : Կոտորածէն առաջ
վճարուած հին տուրքերը որոնց ըն-
կալագրերը կոտորածի եւ թալանի ա-
տեն կորսուած են, կրկին կը պա-
հանջուին, եւ վճարել չը կրցողին ա-
նասունները եւ հոնձերը կը գրա-
ւուին : Սովէ կը վախճուի յառաջի-
կայ տարուոյ մէջ, որովհետեւ եղբր
տուրքի փոխալէն յափշտակուած են :

Թայիւր օրու Ամէստ անուն չա-
րագործը որուն տնտեսութիւնները
ծանօթ են, Երիտազի հարաւարեւոյ-
եան կողմը գտնուող Դաւաղով գիւղէն
նկիւթ թէղքեանի գեղանի աղջկը ա-
ռեւանգեց, խեղճը մտաւ եւ իր ա-
մուսինը արտասահման գնաց ու կոր-
սուեցաւ : Նոյն Թայիւր օրուն Եղի-
ային կիւնն ալ բռնաբարեց եւ տունը
ու պոստէղը գրաւեց : Նոյնպէս գրա-
ւեց Բաղբեան Յովհաննէսի տունը եւ
պարտէղը : Ասոր կի՛նը գայմաշափն
այցելու թիւնէն օգտուելով բողոքեց
Ամէստի դէմ. կառավարիչը զանի օր
մի բանտարկեց, բայց մօլլա Ֆէյզիի
միջամտութեամբ ազատ արձակեց :
Ամէստ անմիջապէս գիւղ վերադա-
ձաւ եւ իւրօրք երիտասարդները գրգ-
ռեց Հայոց դէմ : Այս գրգռման հետե-
ւանք. Սիւլէյման անունով ծառայ
մը համարձակեցաւ Գազազեան Յակո-
բի 9 տարուան աղջկը բռնաբարել :

Տէրափի քիւրտերը վերսկսան ի-
րենց աւազակութիւններուն : Անց-
եալ տարի Կարնոյ ուսն հիւպատոսին
դիտողութեանը վրայ քանի մը հա-
զար զօրք զրկուեցան այդ աւազակ-
ներուն վրայ, որոնցմէ միայն 17
հոգի բանտարկուեցան : Կառավարու-
թիւնը յետոյ Քիւրտերը հանդարտեց-
նելու համար խոստացաւ բանտարկ-
եալները ազատ արձակել եւ չարձա-
կեց. բայց Քիւրտերը այդ խօսքով չը
գոհացան ու յարձակոււ ըրին Բօլոմա-
րի Գայմաշափն վրայ, քանի մը շա-
բաթ առաջ, եւ զանի գերի տարին
Տէրափի ներսերը, սպառնալիք
զրկեցին կառավարութեան թէ ձեթ
բանտարկեալները չարձակէ գալմազա-
մը պիտի սպանեն : Կառավարու-
թիւնը 4-5000 զօրք զրկեց քանի մը
թնդանօթներով, որպէսզի Տէրափը
հնազանդեցէ : Մէկ երկու կէս պարապ
գիւղ այլեցան եւ ոմբակոծուեցան :

Քանի մը ոստիկան եւ զինուորներ
մեռան... Միւթլսարիֆը պաշտօնանկ
եղաւ : Ահա Տէրափը հնազանդեցնելու
վախճանը :

Փառով Քիւրտերու ընդհանուր
տրամադրութեան, ցեղերուն ըմբոս-
տութիւնը հետզհետէ կաւելնայ : Այս
վերջին տարիներու ընթացքին մէջ
անոնց աւազակութիւնը աստիճանա-
բար կանոնաւորութեան մէջ կը մտնէ
մանաւանդ կառավարութեան դէմ :
Իրենց ցեղին անկախութեանը համար
կոռուելու պաղափարը իրենց անձանօթ
չէ : Լաւ կը զինուին. զէնքի համար
զրամ չին խնայել : Կասկած չկայ որ
մինչեւ հիմա իրենց ունեցած յաջո-
ղութիւններէն քաջալերուած կը պատ-
րաստուին աւելի մեծ կոռուներու :
Կրնանք յուսալ թէ մէկ երկու տարի
վերջ ականատես վկանիւրը ըլլանք
գէպքերու որոնք մեծ արձագանք պի-
տի ունենան :

Պարագանքը այդ ամէնը պիտի
բերեն որ միայն ժամանակի գործ
է :

Այսօր հաստատուած է թէ Քիւր-
տերը քաջալերուած կառավարութեան
ապիկարութեան յարձակած են Նանչ-
ըզ հայ գիւղը, որուն բնակիչները
չեն կրցած դիմադրել եւ թողած են
իրենց զրամները եւ հագուստները
որ Քիւրտերը տանին : Ասոնք ծանուցած
են թէ ուրիշ գիւղերու վրայ ալ յար-
ձակում ընելու մտադիր են աւար ըս-
տանալու համար : Կառավարութիւնը
գէպքերուն անգեղակ ըլլալով միատեղ
կարեւորութիւն չը տար :

ՊԱՌՈՒՆԷ. — Կը գրեն Նոր-դարի
«Թուրք պարսկական սահմանազլխի
դադմելով անցեալ շաբաթ Բագս
հասան եօթ հայ ընտանիք — 32 հոգի
Նրանք հազիւ կարողացել են ազատել
իրենց գլուխը միայն, իսկ իրենց
ունեցած չուսեցածը թողել են յար-
ձակող քրդերին : Նրանք թափուած
էին հկեղեցւոյ բակում, բայց երկնքի
տակ, անօթի փորով, եւ ոչոք ու-
շադրութիւն չէր դարձնում : Երախա-
ները հրաւնդ էին, Վերջապէս կիրակի
կի օրը երկու երիտասարդ հէնց եկե-
ղեցու բակում ժողովեցին մի համեստ
զուամար, որը հազիւ 3 օր բաւակա-
նութիւն տայ անօթի թեւան սոված եւ
հրաւնդ փախստականներին : Նոյն ս-
րիտասարդները գլխիցին գործակալին
որ օթեւան տայ զրանց եւ աշխատէ
որ նրանք սովամահ չլինին այս հա-
րուստ քաղաքում : »

ՀԱՆԴԷՍ

Աղջկանց կրթարանի տնօրէնու-
թիւնը կը խնդրէ մեզմէ յայտարարել
թէ վարժարանին վիճակադրոյցներու
բաշխման հանգէսը տեղի պիտի ունե-
նայ ժամը 11/2ին Աւետիսեանի» սրա-
նին մէջ : Եւ այս առթիւ կը հրաւիրէ
ծնողները նաեւ հետաքրքիր երկսեռ
հասարակութիւնը որ իրենց ներկա-
յութեամբ քաջալերեն աշակերտները
եւ ուսուցչական մարմինը :

ԱԶԳ

Սիւլիստէի Արական եւ Իգական
վարժարանաց համար Ուսուցչի եւ
Վարժուհիի պէտքը կայ, ինչպէս նաեւ
Մանկապարտէզպահուհի մը : Փափա-
գողք կրնան դիմել Հոգաբարձութեան
բանակցութեան համար :

Հոգաբարձութիւն Ազգ. Երկսեռ
վարժարանաց
Սիւլիստէի Յուլիս 4 1903

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ք Ի Ա

Էրմենիստան

Էրմենիստանտա միլիթանտալա. րմըզըն ահվալի երնէ շու սրբաբէ: բէրուշան տըր: Ալաշկերտ, խոնու, Մուշ վէ Սասուն գաղալարընտա հիւքիմէթին վէ ասքէրէրին թէզգիգինտէն մաստա, աշիթէթէրին զուլումարը թարիֆի նագապիլ տիր: թէքար գըրկըն պաշանաճաղընտան գորգուլըյոր: սէֆիլ րէչպէրէրի գաթիլ իթմէք, գարը գըզ գաշրուպ ճէպրէն իսլամ իթմէք, հայվանաթ սիւրմէք, էպլէրի պասմագ վէ եագմագ կիպի ճինայէթէր հէր կիւն իշիտիլիյոր: Հիւքիմէթէ վէրիլէն իսթիտալար սէմէրէսիլ գալմագտան մաստա աղաշանլար միւժագաթ կէօր:յոր:

— Զաշկաժակ վէ Զարշանճագ գաղալարընտա քիւրտ աշիթէթէր եէքաիկէրի իլէ վուրուշուպ, թարաֆէյնտէն հէր հանկընտա մաղլուպ օլուր իսէ, գարար վէ թագմինաթը Էրմէնի քէօլէրինտէն ճէպրէն թօրլամագտա օլտըզլարընը եէնի րաբօրթլարէ թէպէյին օլընյոր: եանի Գիւրալէրին հաշարաթը Էրմէնիլէրէ գարշը տախի օլմագա՝ մագարաթը տօղրուտան տօղրու Էրմէնիլէրէ իրաս իտէյոր:

— Բաշափանքտա Էրմէնի քիւրտսէնի վէ մէքուէպինի Գիւրալէր գաթիլ իթմիշլէր: Թիւրք ասքէրի պէթլէմէքտէ օլան հաղտուղ նամ քէօյտէն 8 գըզ գաշրմըլար տըր:

— Համիտի եիւզպաշըն խալիլ աղա 15 քիշի իլէ խօշլույա էնուպ, պիր թագըմ Էրմէնիլէր ետա րէլէմիշ վէ 78 հայվանաթ սիւրմիւշ օլտըզը Էրգրուտան յունիս 11 թարիլիլ րաբօրթլէ միւսպիթ տիր:

— Թիւրք ասքէրէրի վէ չէթէլէր պէյնիտէ հէլէլէրտէ Գաբաուիտէ վուգու պուլան միւսատէմէտէն սօնրա եէնի վուգուսթ զուհուր իթմէտիկինէ Սթանպուլտան պաթէլէկրաֆ պիտիթիլիյոր:

Պուլուլէ պէրապէր Մակեթոնիանըն իւշ վիլայէթէրինտէ գօմթէլէր ինթիգամ տլմագ իւշիւն պաղը էշխասը գաթիլ ու ճէհր իթմէքտէ օլտըզլարընտա տաիր Պալ Ալիյէ հէր տալիմ մալիւմաթ վէրիլմէքտէ իմիշ: Շու հալտէ գօմթէլէր ամէլիւթտան տուր օլմալուպ, իլէրիսի իշիւն քէնտիլէրինէ մանի օլապիլէճէք քիմէսէլէրի բաղամագտա ըմըլար:

— Պուլկարիանըն Սթանպուլ մասլահաթ կիւզարը Մ. Կէշէվ խարիճիէ նէզարէթինէ կիտէրէք, սամանը հիւքիմէթինին Մաքէթոնիա պուլկարլարը հագգընտա

էլէ ալտըլը թէսպիլլէրտէն տօլալը Պուլկարիա թարաֆընտան պէյանը թէշէքիւր իլէ, Թիւրքիանըն սինօր իւզէրինէ թօրաւըլ օլտըզը ասքէրէ մուգապիլ Պուլկարիանըն տալիս ճէմ իտուպ սինօրընա կէօնտէրտիկի ասքէրէրի սալը վէրէճէկինէ պէյան իթմիշ տիր:

ՏԱԽԻԼԻԹԷ

Կէշէն ճուլուս կիւնի Սօպրանիէ աղալարընտան միւթէշէքիլ պիր հէլէթի մէպուսէնամտար վաթանքէպիլ Մ. Տրական Գանքովըն րէյասէթի իլէ Ֆէխամ. Բրէնսին հուպուրուլա գապուլ օլունուպ, 185 մէպուսան իմզաը իլէ պիր րօթէթէսէնամէ թագտիմ իթմիշ տիր: Էքսէրի աղալարտան իմզալանան իշպու րօթէթէսէնամէ մէմուրլար իշիւն մէրի իւլ իճրա օլան գանուլանմէնին շիմտիքի գապինէ թարաֆընտան թաթիլ շալշանաընա գարշը իշիթէքա իտէր իտի:

Ֆէխամ. Բրէնս Մ. Գանքովը վէ րէֆէգասընը եանի Սթօլիւվիսթ, Գարապէլիսթ վէ սալիթ բարթիլլէրէ մէնուպ զէվաթը հիւսնիւ գապուլ իթմիշ իտի իսէտէ, մէքէրի գանուլան իճրասը իշիւն գաթիլ պիր ճէվապ վէրմէ իշիտի: Ֆէխ. Բրէնսին իշպու միւրհէմ հարէքէթի գապինէ մուլալիֆ օլան պիւթիւն բարթիլ. գանլար պէյնիտէ խօշլուտիլէթ օլզիթ հիւքիմ իթմէքտէ օլտըզը վէ Պուլկարիանըն սֆուգը սիւր. սիսինտէ գարանլըզ պուլուտար միւշահէտէ օլընտըլընը Էճէկի մուլպիլլէր եալը օլար:

Մարուֆ օլտըզը իւզլէ, մէքէրի գանուլ միւճէպիլնէ հիւքիւ. մէթ մէմուրլարը քէֆի մալաշա աղ ու թալին օլընտալաճագյար: վէ ճիստի օլարագ՝ Պուլկարիանըն էօլէ պիր գանուլան իգթի. գասը վար ըտը քի՝ լիյագաթսրգ քիմէսէլէր բարթիլգանլըզ սէպէ. պի իլէ մէմուր թալին օլունուպտէ մէսալիհի ումուիլլէր իլալ իթմէ. սինլէր, նէթէքիմ տագտան չօպաշլարը թօրլայուպտէ՝ Ժանտարմա գըլաֆէթի իլէ՝ չէհրիլէրին ինզպաթընը ալլէրին եէտի ինթիպտաընա թէսլիմ իթմէ սինլէր: Իլա տիբայէթ, մէհարէթ վէ իգթիսար սահիպի քիմէսէլէրի մէմուր նասպ էլլէսինլէր: իշիթէպուլ մագսէտլէ վաղ օլընտան մէմուրին գանուլանմէսի պու կիւն թաթիլ օլըմըլ պիր հալտէ տիր: Շիւնէրալ Բէթրուլ գ պիլէսինին գանուլան մուլալիֆ շու հալէքէթտէն մագսէտի՝ Սօպրանիէի տաղըլմըրուպտէ՝ եէնի մէպուսան ինթիլապաթընտա մուլաֆագիլ իթմէլտէ ետէպիլ Էք իշիւն քէնտի սատըզլարընտան մէմուրլար թալին իթմէքտէն իպարէթ տիր:

Պու եօլլէ տիկէր բարթիլգանլարըն մէնֆաթընա գարշը ճէնկէշմէկէ պաշլամըլար տըր:

Սօֆիտան յուլա 15 թարիլիլ պիր թէլէկրաֆա պէնաէն մէքէրի մէմուրէն գանուլանմէսիւնին թէմամէն իճրասընը Ֆէխ. Բրէնս Ժէնէրալ Բէթրուլա էմր ու իհալէ իտէրէք, եագընտա էվր. բալա սէյեահաթ իտէճէք իմիշ:

— Մ. Միսալ Տէմիւրճեան իգ. տիկաճը մինասէպէթի իլէ՝ չէհրի. միզտէ եէնի թէշէքիլ օլընտան Աղալարտանալ Ընկերութիւնա 10 ֆ. իսնէ վէրմիշ տիր:

ՍԵՐՊԻԱ

Աքբէրիէ գօմանտարլարընտան 20 գապիլ մէմուրիլէթինտէն չըգարլարար:

— Քէզա Սիւպիտանըն Լօնտրա Բարիզ, Պուգրէշ, Աթինա վէ Չէթինէ էշիլլէրինին մէմուրիլէթինտէն իլալաճ օլընտըզլարընը մէքէրի թէլէկրաֆ պիլտիրմիշ տիր:

Չ Ի Ն

Բէքինտէն ալընտ պիր թէլէկրաֆ Քալանկ-Սի վիլայէթինտէ տէհէթիլ գըթլըզ հիւքիմէքտէ օլտըզընը պիլտիրտի: Բէսմի բա. բօրլա նագարէն, աճ էօլմէքտէն գուրթուլմագ իշիւն չօգ չիլիլէր քէնտի քէնտիլլէրին եէսիր սթմա գտա ըմըլար: վու-Չաուտա ինսան բաղար սշրլմըլ կիպի տիր. բէք չօգ քիւլիլլէրէրէքէկ վէ գրգ) սթթրլարլար: Սուալ-Բէնկտէ 1500 մահպուսար ալ կիւն իշիւն տէլօյտիլիլլէր, պուգըտէ 100 մահպուսը պիրտէն գաթիլ իթմիշլէր:

Գըլթլըզ օ՝ տէրէճէ իլէրէմիշ քի էհալի էօլէն ինսան իւզէրինէ տէրհալ գօշուպ, թէնի տոհա սօ. վուլաւտան, սօյուպ վէ բիշիթիպ եէմէքտէ իմիշլէր: Նիհայէթ ճէ. նագէլլէրի եէմէք իշիւն պիրի պիրինտէն գաբաճագտա վէ գուլլէթի իշիլգան էօլիլիլ գարուպ խոնէ սինէ գօշմագտա ըմըլ:

ԲԱՐԱ ԷՕԼՏԻԻ

Յուլիս 20 տղ սահաթ 4տէ Բա. բանըն վէֆաթ իթմիշ օլտըզընը թէլէկրաֆա պիլտիրիլմիշ տիր: Բաբանըն վէֆաթը սաաթընտա վաաթիկանըն միւտիլլէրիլլէր գար. տինալ Օրիկիլալա թէվտի օլընտար րօմաուտ չօգ տիւքանլար վէ թէաթրօլար եսա էլամէթի իշիւն գաբանըլար:

Ալաւորիա վէ լիսնիա իմրե. բաթօլարը վաաթիկանտալ պիրէր թէլէկրաֆ քէշիտէ իտէրէք պէյա. նր թէլէսի. ֆի իթտիլլէր վէ լէնն Շի. Բարսիւրն զէքիլ ճէմիլինի խաթըրտան ֆէրամուշ իթմէլլէ. ճէքէրինի վաա էլլէտիլլէր:

ՄԻԻԹԼՆԷՎՎԻԹԷ

Ինկիլթէրա գարը վէ գրալիցա. լը իրլանտալի կիթտիլլէր:

— Ալաւորիա վի. քէլաւնտան Բէնիամին Գալալի վէֆաթ իթմիշ օլտըլալէ, իմրեալթօր Ֆիանց Եօզէֆ պիր մէքթուպ է անըն մէ. մուրիլլէրինի գօնթ կօլուխուպիլէ իհալէ իթմիշ տիր:

— Բուսիանըն Սամարա վի. լալէթինտէ Բալարլօթթէնամ չէ. հիւրտէ հարիգ զուհուր իտուպ, 500 խանէ, 200 տէքօ, 10 աւտէտ կէմի վէ 2,000,000 բունթ պուգտայ եանուպ քիւլ օլմուշ տըր: խասարաթըն մէճուլի 12 միլիոն ֆր. հէրապ օլընմըլ տըր:

ԹԷԼԷԿՐԱՖԻԱՐ

Սրանպօլ 10 Յուլիս

Ալաւորիա վէ բուս գօնսօյուլարը թահգիթլարլընը պիլիլլուպ, Սթիւպէ տգէթիլ իթտիլլէր:

Պապը Ալինին պէյանը իւզլէ, աւըրանվուտարա գարշը էլէ ալընան թէտապալի ասքէրիլլէ էլի սէմէրէ հասըլ իտուպ, օգոստոստա խիթամ պուլաճագ ըմըլ: Պատէ. հու միւշիթ Էօմէր Բուշտի բա. չանըն ասքէրէրինտէն պիր գըսմը սալըզէրիլլուպ, տիկէրի չէթէլէ. ին թաադիպիլլէ թալիլիս օլընաճագ:

Յ. բ. բի ճիվարընտա չէթէլէր վէ ասքէր պէյնիտէ վուգու պուլան մի. սատլմէտէ տիւլմիշ օլան գօմթիլալար իւզէրինտէն տինամիթ պօմպալարը վէ միւլիթ էվրագ պուլընտըլընը Պապը Ալի լուս վէ Ալաւորիա էլլէլլէրին պիլտիրտի:

— Գրու Եսրկի պա թէլէկրաֆ մալտուլմընա Սթանպուլտա իպարագ օլընան թաթիլլէրինտէն տօլալը՝ Սուլթանա պէյանը թէշէքիւր իթտի: Սուլթան ալը թարգտա պիր ճէվապ վէրուպ, Եօնանլը Բրէնսէ պիր արապիլթան աթը իհտա էյլէտի:

ԹԱՏՐՈՆ «ՐԻԿԱ»

Ներկայացում Նաաթտա Հայ ղերա. խմբին, առաջնորդութեամբ Պ. Վ. Պապահանի: Ամեն երեկոյ ներկայացմանց շարունակութիւն:

Եղբրեք, Էլզեր, պարեր, Ժիւ. նաաթիկ եւ ծիծաղաշարք գօմէտիլլէր. վաղը, կիւրակէ երեկոյ, Ռեճալ պատրաստութեամբ պիտի ներկայացուի՝ առաջին անգամ ըլլալով

ԵՂԱՍԵՐԱՍՊԱՆԸ

Նոր թատերախաղ 3 արար Վ պատկեր

Одговорникъ Н. Драгулевъ

Печ азгнана Взаимность Варна.